ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«26» մարտ 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի տեղակալ _____ Հ. Այունց

ՍՑ-ԳԲԽ-03/17 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.11.2015թ. թիվ 1/73-1/34223-15 և 13.12.2016թ. թիվ 03/73-3/27667-16 գրություններով ներկայացված «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության 05.11.2015թ. թիվ ԱԿ/12828-15 գրության հիման վրա, 09.11.2015թ. թիվ 1/73-1/34223-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝

Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 01.12.2016թ. թիվ 01/04.1/4374-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով արձանագրել է «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ, քանի որ Օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (07.10.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 13.12.2016թ. թիվ 03/73-3/27667-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Արարատի մարզպետարանի 07.12.2016թ. թիվ 1/3/1-2/7025-16 գրության համաձայն՝ ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀԱՄ-ԲԸԱՇՁԲ-16/06» ծածկագրով գնման ընթացակարգին «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն 28.08.2016թ. մասնակցության հայտ է ներկայացրել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 124-րդ կետի 2-րդ ենթակետը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել Ընկերությանը գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 10.11.2015թ. թիվ 01/04.1/3263-15 գրությամբ դիմել է «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ին, որին ի պատասխան՝ Ընկերության կողմից կարծիք չի ներկայացվել:

Միևնույն ժամանակ Ընկերությունը 12.11.2015թ. բողոք է ներկայացրել ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում, որը սակայն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 01.12.2015թ. թիվ ԳԲԽ-43/16 որոշմամբ մերժվել է:

«Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 25.01.2017թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-03/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

«Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 31.01.2017թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-03/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են, որ չեն տիրապետում գործում առկա բոլոր նյութերին, ուստի անհրաժեշտ է ժամանակ տրամադրել Ընկերությանը գործի նյութերին ծանոթանալու և դրան համապատասխան՝ Ընկերության դիրքորոշումը ներկայացնելու համար:

Կենտրոնի սույն եզրակացությունը Խորհրդին ներկայացնելու օրվա դրությամբ՝ Ընկերության կողմից որևէ դիրքորոշում և այն հիմնավորող փաստաթղթեր չեն ներկայացվել:

3. ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ առողջապահության նախարարությունը 05.11.2015թ. թիվ ԱԿ/12828-15 գրությամբ հայտնել է, որ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված

հարցման վերաբերյալ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը եզրակացություն է ստացել, համաձայն որի «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է եղել ներկայացված գնային առաջարկից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 25.01.2017թ. ժամը 17:30-ին և 31.01.2017թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-03/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԳԲԽ-03/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 09.11.2015թ. թիվ 1/73-1/34223-15 և 13.12.2016թ. թիվ 03/73-3/27667-16 գրություններով ներկայացված «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ Պատվիրատուի կարիքների համար ընդհանուր տարածքի և «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի ուժեղացման, արդիականացման, բարեկարգման և վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգ:

2. «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար ընդհանուր տարածքի և «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի ուժեղացման, արդիականացման, բարեկարգման և վերակառուցման աշխատանքների նպատակով հայտարարված «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով 07.10.2015թ. ներկայացրած հայտի N 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, ***հայտնել և հավաստել է, որ հայտը***

ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

3. «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ՝ ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, որի ընդհանուր գինը կազմել է ***205.469.401*** ՀՀ դրամ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 07.10.2015թ. կատարված հարցմամբ՝ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

5. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.10.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմում է ***109.031.746*** ՀՀ դրամ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.11.2015թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 7-1 արձանագրության 2-րդ կետով որոշել է մերժել «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտը:

7. Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.12.2016թ. թիվ 01/04.1/4374-16 գրությամբ արձանագրել է «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը, միևնույն ժամանակ հաշվի առնելով խախտումը թույլ տալու պահից (07.10.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելու վերաբերյալ տեղեկատվության բացակայության հանգամանքը, գտել է, որ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

8. ՀՀ Արարատի մարզպետարանը 07.12.2016թ. թիվ 1/3/1-2/7025-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀԱՄ-ԲԸԱՇՁԲ-16/06» ծածկագրով գնման ընթացակարգին «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն 28.08.2016թ. մասնակցության հայտ է ներկայացրել:

9. ՀՀ ֆինանսների նախարարությունը 13.12.2016թ. թիվ 03/73-3/27667-16 գրությամբ հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել Ընկերությանը գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

10. Կենտրոնը 16.12.2016թ. թիվ 01/04.1/4594-16 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով պարզաբանել «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի կողմից Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱՔԴ/5638/02/15 քաղաքացիական գործով 08.11.2016թ. կայացած վճռի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու պայմաններում Ընկերությանը Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու նպատակահարմարության հարցը:

11. Ի պատասխան Կենտրոնի վերը նշված գրությանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 17.01.2017թ. թիվ 03/73-3/470-17 գրությամբ հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց՝ քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ որևէ նորմ, որը կկասեցնի ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշման կատարումը՝ մինչև վերջինիս վերաբերյալ դատաքննության ավարտը, բացառությամբ նշված գործընթացի շրջանակում կիրառելի համարվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցի ապահովման միջոցներից, որը տվյալ պարագայում բացակայում է:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-03/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.12.2016թ. թիվ 03/73-3/27667-16, ՀՀ առողջապահության նախարարության 05.11.2015թ. թիվ ԱԿ/12828-15, ՀՀ Արարատի մարզպետարանի 07.12.2016թ. թիվ 1/3/1-2/7025-16 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման

չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից ***հայտը ներկայացվելուն նախորդող՝***

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն *(հղումը կատարված է մինչև ՀՀ կառավարության 07.07.2016թ. N 700-Ն որոշումը ուժի մեջ մտնելը)* հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը *(հղումը կատարված է մինչև ՀՀ կառավարության 07.07.2016թ. N*

700-Ն որոշումը ուժի մեջ մտնելը) նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար հայտարարված «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով 07.10.2015թ. ներկայացված հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է ***գնային առաջարկ, որի ընդհանուր արժեքը կազմել է 205.469.401*** ՀՀ դրամ:

«Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի թիվ 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, ***հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների իր համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից (205.469.401 ՀՀ դրամ),*** մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.10.2015թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է ընդամենը 109.031.746 ՀՀ դրամ:***

Կենտրոնը արձանագրում է, որ «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար հայտարարված «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 07.10.2015թ. ներկայացված հայտի թիվ 3.4 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում, քանի որ Մասնակիցը նշված հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ գնային առաջարկից, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է ***109.031.746 ՀՀ դրամ***, այն պայմաններում, երբ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է ***205.469.401 ՀՀ դրամ:***

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և***

ներկայացրած լինի հայտ, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Կենտրոնը արձանագրում է, որ «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***07.10.2015թ.*** հայտ է ներկայացրել «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար հայտարարված «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով ընթացակարգին, որի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում, որից հետո, համաձայն ՀՀ Արարատի մարզպետարանի 07.12.2016թ. թիվ 1/3/1-2/7025-16 գրության, «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն 28.08.2016թ. մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀԱՄ-ԲԸԱՇՁԲ-16/06» ծածկագրով գնման ընթացակարգին:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով,*** եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ ***որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:***

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 09.11.2015թ. թիվ 1/73-1/34223-15 և 13.12.2016թ. թիվ 03/73-3/27667-16 գրություններով ներկայացված «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08416661) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-03/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան